ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/1696/05/09
Նախագահող դատավոր՝ Հ. Բեղնյան
Դատավորներ՝ Լ. Սոսյան
Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԴ/1696/05/09
2012թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<18>> հունվարի 2012թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Մ. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

քննարկելով ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի (այսուհետ՝ Հասարակական կազմակերպություն) ընդդեմ «Երևանի կառուցապատման և ներդրումային

ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետևանք տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին, վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 08.11.2011 թվականի որոշման դեմ Կազմակերպության բերած վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Հասարակական կազմակերպությունը պահանջել է ոչ իրավաչափ ճանաչել Կազմակերպության գործողությունները, որով սպառիչ և լրիվ պատասխան չի տրվել հայցվող տեղեկատվության վերաբերյալ, և որպես հետևանք պարտադրել տրամադրելու տեղեկատվություն այն մասին, թե Կազմակերպության 2006, 2007, 2008 թվականների ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից որքան է կազմել, նույն թվականներին որ կազմակերպությունների հետ է կնքել հանձնարարության և նկարագրության պայմանագրեր և որքան հասույթ է ստացել այդ պայմանագրերից:

ՀՀ վարչական դատարանի 07.12.2009 թվականի վճռով Հասարակական կազմակերպության հայցը մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2010 թվականի որոշմամբ ՀՀ վարչական դատարանի 07.12.2009 թվականի վճռի դեմ Հասարակական կազմակերպության վճռաբեկ բողոքը բավարարվել է՝ ՀՀ վարչական դատարանի 07.12.2009 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 20.06.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.11.2011 թվականի որոշմամբ Կազմակերպության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 20.06.2011 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի խախտման հիմքով:

Բողոքում պատճառաբանվել է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 6-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերը, 8-րդ հոդվածը, 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը սույն վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը պատճառաբանում է հետևյալ հիմնավորմամբ.

Առկա է նյութական և դատավարական իրավունքի նորմերի առերևույթ էական խախտում:

Բողոք բերած անձը նշված հիմնավորումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները, ինչը հանգեցրել է գործի սխալ լածմանը

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ օրենսդրության համաձայն կարող է սահմանափակվել տեղեկատվություն ստանալու անձի իրավունքը: Տվյալ դեպքում պահանջված տեղեկատվությունը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված տեղեկատվության ցանկում ընդգրկված չէ, հետևաբար, այն Հասարակական կազմակերպությանը չի կարող տրամադրվել:

Բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.11.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

<u>3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>

Վճռաբեկ դատարանը, քննարկելով բողոք բերած անձի հիմնավորումը՝ վճռաբեկ բողոքը քննության ընդունելու մասին, գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է վերադարձման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե բացակայում են նույն օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի համաձայն՝ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, առկա է նյութական կամ դատավարական իրավունքի նորմի առերևույթ էական խախտումներ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի առերևույթ էական խախտումների առկայության մասին բողոք բերած անձի հիմնավորումը հերքվում է Վերաքննիչ դատարանի որոշմամբ նշված պատճառաբանություններով:

Այսպես, Վերաքննիչ դատարանը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.12-րդ հոդվածին համապատասխան վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում վերանայելով դատական ակտը, որոշում կայացնելիս, պատճառաբանել է, որ «Հայաստանի Հանրապետությունը երաշխավորվում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան, այդ թվում՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատության իրավունքի պաշտպանությունը, ինչն ուղղակիորեն բխում է իրավական պետության սկզբունքից: Նման երաշխիք է սահմանված նաև «Մարդու իրավունքների և հիմնարար

ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 10-րդ հոդվածով, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունն առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից», «Կազմակերպության 06.03.2009 թվականի թիվ 38/01-322 պատասխան-գրության բովանդակությունից ակնհայտ է, որ պահանջվող տեղեկատվության տնօրինողը հանդիսանում է Կազմակերպությունը, հետևաբար, վերջինս պարտավոր էր «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջին համապատասխան տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն: Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարում Վարչական դատարանի այն պատճառաբանությունը, որ. «...նշված պատասխանը հարցման 1-ին կետով պահանջվածին տրված պատշաճ պատասխան չի կարող որակվել, քանի որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով տեղեկություններ փնտրող անձին տրամադրել իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն»», «պետական ոչ առևտրային կազմակերպությունը, հանդիսանալով շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն, ինչպիսին է նաև Կազմակերպությունը, իր գործունեության ընթացքում առևտրային շահ չունի, հետևաբար, դրա գործունեությանը վերաբերող ցանկացած տեղեկություն չի կարող պարունակել առևտրային գաղտնիք»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը <<Մելտեքս>> ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսիսյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 32283/04) գործով 17.06.2008 թվականի վճռով ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանվածության վերաբերյալ արտահայտել է իր իրավական դիրքորոշումն այն մասին, որ <<Վճռաբեկ դատարանի իրավասությունը սահմանափակվում էր միայն իրավունքի հարցերի ուսումնասիրմամբ: Նման հանգամանքներում չի կարելի ասել, որ Վճռաբեկ դատարանը չէր նշել հիմնավորում այն պատճառով, որ այն հաստատել էր ավելի ցածր ատյանի դատարանի եզրահանգումները և ներառել էր դրանք իր որոշումների մեջ>>:

Նման պայմաններում վճռաբեկ բողոքը քննության ընդունելու վերաբերյալ բողոք բերած անձի հիմնավորումները՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի առերևույթ էական խախտման առկայության մասին, անհիմն են, քանի որ տվյալ դեպքում առկա չեն նյութական և դատավարական իրավունքի նորմի առերևույթ էական խախտումներ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը չի համապատասխանում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին: Հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը ենթակա է վերադարձման:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ և 118.8-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վերադարձնել թիվ ՎԴ/1696/05/09 վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 08.11.2011 թվականի որոշման դեմ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի բերած վճռաբեկ բողոքը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

Դատավորներ՝ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Վ. ԱԲԵԼՅԱՆ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆ

Գ. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Մ. ԴՐՄԵՅԱՆ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Է. ՀԱՅՐԻՅԱՆ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ